

ԿՐՑՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՆԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵՒ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ

Զի Տէր Հոգին է. ուր հոգի տեսան է անդ
ազատութիւն է. Բ. կորնթ. 3 Գլ. 17.

Մեր փրկչի երկինք համբառնալը տխուր խոհեր էլ կարող է առաջացնել մեր մէջ: Ինչո՞ւ թողեց Նա մեզ, մոլորուած և տանջուած մարդկանցս, տապալկուելու այս աշխարհի վրայ ամենօրեայ հոգսերով կեանքի և ինքնապահպանութեան, ճշմարտի և ստի, լոյսի, և խաւարի և այլ անվերջ հակադրութիւնների այս անընդհատ կռիւների մէջ, իսկ Ինքը դիմեց դէպի եթերական երանաւէտ բարձունքը, ուր լոյսն ու խաղաղութիւնն են թագաւորում:

Մեր Տէրը կարճ մնաց այս աշխարհի վրայ. երանի չէ՞ր, եթէ փոխանակ երկինք համբառնալու, մշտապէս ապրէր մեզ հետ և մեր այս բարդ եւրոպական քաղաքակրթութեան նեղ ու շեղ շաւիղներով, ուր ամեն քայլափոխ այնքան վտանգաւոր է և ուր այնքան թոյն կայ ամբարած, մեզ զգուշացնելով և սովորեցնելով՝ դէպի բարձրագոյն բարին առաջնորդէր: Ա՛խ, շատ ծանր, շատ դժուար է ներկայի պետական և սոցիալական կեանքը, Այդ կեանքը մի յորձանուտ ծովի է նման, և ո՞ւր է այն նաւապետը, որի վրայ մեր յոյսը դնէինք, թէ նա մեզ ապահով նաւահանգիստ կհասցնի, որ նա փոթորիկների յորձանքների և սառցալեռների առաջ իւր գլուխը չի կորցնի, թէպէտ և նրա նաւը զինուած լինի մեր քաղաքակրթութեան ընձեռած ամէն նուրբ և կատարեալ միջոցներով:

Ներկայիս պետական, տնտեսական և հասարակական կեանքը այնպիսի կնճռոտ և անլուծելի հարցեր է առաջ բերել, որ ամենքը իրենց գլուխն են կորցրել: Ազգերն ու

պետութիւնները տենդային արագութեամբ սպառազինուում են՝ խլելով չքաւորի բերանից վերջին պատառը, որպէս զի պատրաստ լինեն միմեանց ոտնատակ ու ջարդփշուր անելու. դասակարգերի, բանուորի և գործարանատիրոջ յարաբերութիւններն այնքան լարուել են, որ ամեն ըսպէ սպասուում է կռիւ, բոլորը բոլորի դէմ, ուր մարդը գազան դարձած իւր նմանի արիւնը պիտի խմի: Այո, թուում է թէ խախտուել, խարխուել են այս աշխարհի հիմքերը. երկինքը պտոյտ է գալիս մեր գլխին, իսկ մենք այս բոլորին ականատես և գիտակից, շուարած կանգնած ենք և ապագայի երկիւղներով պաշարուած՝ հարց ենք տալի, ո՞ւր են մեր առաջնորդները: Եւ մենք կարօտագին մեր հայեաքը դէպի անցեալն ուղղելով՝ ասում ենք. երանի՜ թէ մեր Փրկիչը մեր ժամանակում ապրէր և մեր ժամանակի, մեր դարու և մեր հոգիների վրայ ծանրացող այս ծանր հարցերին լուծում տար: Նա, որ իւր ժամանակին փրկեց հին յունահռովմէական խորտակուած նաւը, Նա կարող կլինէր մեզ էլ եւրոպական քաղաքակրթութեան առաջ բերած վտանգներից ազատել և դէպի փրկութիւն առաջնորդել:

Բարեբախտաբար մեր փրկիչը մի անհետացող աստղ չէ, որ մեր հորիզոնի վրայ մի առժամանակ փայլելուց յետոյ անհետանար. Նա մի արեգակ է, որը թէպէտ հեռուից, բայց աստղից աստղ լուսաւորելով՝ իւր անհուն հեռաւորութիւնից մեզ էլ մշտապէս լուսաւորում և ջերմացնում է և նոր կեանք պարգևում: Այո, նոր կեանքեր և նոր մարդիկ յանուն մեր Փրկչի հանդէս են եկել և հանգէս են գալու, որպէս զի լուսաւորեն և առաջնորդեն մեզ: Ո՞վքեր էին հնում Պօղոս առաքեալը, Որիգինէսը, Գրիգոր Լուսաւորիչն ու Աւգուստինը, Ասիղացի Ֆրանցը և Շնորհալին, Գլադստօնն ու Տալստոյը, եթէ ոչ մարդիկ մեր Փրկչի լուսով լուսաւորուած և հոգւով տոգորուած: Ի՞նչ կլինէր նախկին դարերի կեանքը, եթէ մենք դոցա վերայից վերցնենք մեր Փրկչի կենդանացնող շունչը, լուսաւորող ճառագայթը, կենդանացնող հոգին. մի մութ քառս անշուշտ:

Ահա այսպէս մենք գալիս ենք այն համոզմանը, որ թէպէտ մեր Փրկիչը մեզնից հեռացել, համբարձել է, բայց Նորա Ս. Հոգին սաւառնում է դարերի և մարդկութեան վրայով, և լուսաւորում և առաջնորդում մեզ: Այս հաւատն են մեր մէջ զարթեցնում Հոգեգալստեան և մինչ-այժմեան մարդկութեան պատմութիւնը: Այդ հաւատին ոյժ է տալիս նաև հայի մարտիրոսութեան պատմութիւնը, այն հայի, որ մինչև այժմ էլ հաւատում է, որ ամէն լաւ իւր քրիստոնէական ճշմարիտ կրօնի և եկեղեցու շնորհիւ է որ ունի, և իւր կեանքի գնով կպած իւր լոյս հաւատին ու եկեղեցուն և նրան վստահանում է իւր անհատական և ազգային փրկութիւնը: Էլի մնում է միայն Նա, մեր Փրկիչը, որ մեզ այն հաւատն է ներշնչում, թէ մեր մէջ բնակուող Նորա Ս. Հոգին պիտի նախ կարողանայ լուսաւորել մեր ներքին աշխարհը և պիտի հնարաւորութիւն տայ մեզ այս դարի դժուարութիւններին յաղթելու և դիմաւորելու մարդկային ցեղի այն ներդաշնակ և երջանիկ ապագային, որ Աստուծոյ արքայութեան զաղափարով է բնորոշուած Աւետարանի մէջ: Այդ հոգին է, որ մեզ այն հաւատն է ներշնչում, որ հօգրի օրէնքի, բռնութեան և անազատութեան դարերը պիտի տեղի տան Ոգու և ազատութեան դարերին, որովհետև մեր Փրկիչը հոգի է, իսկ ուր Հոգին է, այնտեղ էլ ազատութիւն է թագաւորելու:

Ապրիլ 22

Մ. Խոսիկեան.

